[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ ապրանքագիր (արտադրանքների, ապրանքների առաքման)	[2] Սերիա	[3] Համար
16	Հոկտեմբեր	2019 թ.		Բ	1801561227
[4] Առաքման ամսաթիվ				Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի	
16	Հոկտեմբեր	2019 թ.		Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի դուրս գրման ամսաթիվ	

	Պայմանագիր	
	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար
	18 Հունվար, 2018 թ.	
[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)		

Արտադրանք, ապրանք առաքող անձի	
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 6 9 0 2 0 8 7
[9] Անվանումը	«ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)
[10] Բանկային տվյալները	"ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ N 1570015001210100
[11] Գտնվելու վայրը (հասցեն)	ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57
[12] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են	ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57
[13] Լրացուցիչ տվյալներ	

Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի	
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 6 3 1 2 6 3
[15] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը)	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ
[16] Բանկային տվյալները	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն N 900011000834
[17] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5
[18] Լրացուցիչ տվյալներ	
[19] Ում միջոցով	Անուն, ազգանուն Լիազորագիր: Համար Ամսաթիվ
[20] Մատակարարման (առաքման) եղանակը	
[21] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն)	ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5

[22] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Արժեքը
1	2	3	4	5	6
1	Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 34151319 բ/գ,	հատ	1	39400	39400
Ընդամենը					39400

Առաքող՝ PIROGOVA EMMA 6805680298
(անուն, ազգանուն)

Ստացող
(անուն, ազգանուն)

16/10/2019 11:20:15

ՈՐՈՇՈՒՄ
Ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին

04 սեպտեմբերի 2019թ. ք. Գյումրի

ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ՝ Է.Ս.Վարդապետյանս, քննարկելով վարույթում քննվող 34151319 քրեական գործի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

ՀՀ ոստիկանության Աշոցքի բաժնի ծառայողները ստացված օպերատիվ տվյալները իրացնելիս 2019 թվականի հունիսի 29-ին ժամը 20:50-ին Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղու վերջնամասից ապօրինի թմրամիջոց պահելու, օգտագործելու և իրացնելու կասկածանքով ոստիկանության Աշոցքի բաժին բերման են ենթարկել Աշոտ Վարազդատի Զոբանյանին՝ իր կողմից վարած «Վազ 2106» մակնիշի 31 ՍՍ 986 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով և Դերենիկ Գուրգենի Տոնոյանին:

Աշոտ Զոբանյանի անձնական խուզարկությամբ վերջինիս հագին գտնվող կիսաթև բաճկոնի ձախ ծոցագրպանից հայտնաբերվել է 1 հատ 3մ/լ տարողությամբ չօգտագործված ներարկիչ ասեղով, 2 հատ կանաչ եզրերով ներարկիչի ասեղներ, 1 հատ էլեկտրոնային առանց գրառման կշեռք, կիսաբաճկոնի աջ գրպանից հայտնաբերվել է 1 հատ «Սամսունգ» մոդելի 35425105050685/7 և 35425205050685/5 գործարանային համարների բջջային հեռախոս, աջ ոտքի գուլպայի միջից հայտնաբերվել է 1 հատ 5մ/լ տարողությամբ օգտագործված դատարկ ներարկիչ՝ ասեղը ծայրին, կիսաթև վերնաշապիկի ձախ գրպանից հայտնաբերվել է 12.08 գրամ շագանակագույն գույնի յուրահատուկ հոտով բամբակի նմանվող պոլիէթիլենային տոպրակով փաթաթված զանգված և 1.47 գրամ քաշով շագանակագույն գույնի հետքերով սպիտակ բամբակ :

Դերենիկ Տոնոյանի անձնական խուզարկությամբ վերջինիս մոխրագույն գույնի սպորտային վերնաշապիկի արտաքին աջ գրպանից հայտնաբերվել է «BRAUN injekt» գրառմամբ 10մ/լ տարողությամբ ներարկիչ, ծայրին՝ ասեղ փակիչով, որի մեջ առկա է 4 մ/լ տարողությամբ ղեղնակարմրավուն հեղուկ զանգված, սև ջինսե տաբատի արտաքին աջ գրպանից հայտնաբերվել է «Pregabalin-Pregasol» 150 գրառմամբ կարմիր և դեղին գույներով թվով 20 դեղահաբ, որոնք գտնվել են փակ վիճակում, տաբատի աջ արտաքին փոքր գրպանից հայտնաբերվել է սպիտակ և կապույտ գույնի պոլիէթիլենային փաթեթ, որի մեջ առկա է 0.74 գրամ քաշով շագանակագույն գույնի յուրահատուկ հոտով կոշտ և մանրացված զանգված, տաբաաի ձախ արտաքին գրպանից հայտնաբերվել է «DISCARD AFTER USE» գրառմամբ 5մ/լ տարողությամբ ներարկիչ 3մ/լ տարողությամբ լցված դեղնավուն գույնի հեղուկով, ներարկիչ՝ գլխիկի հատվածը հալեցված վիճակում, նույն գրպանի միջից հայտնաբերվել է նաև մուգ շագանակագույն գույնի յուրահատուկ հոտով պոլիէթիլենով փաթաթված 2.05 գրամ քաշով կոշտ զանգված: Դ.Տոնոյանի աջ ձեռքի ափի միջից հայտնաբերվել է <<Nokia» տեսակի 359284/04/623176/4 գործարանային համարի վարդագույն և սև գույնի վնասված բջջային հեռախոս, որի մեջ առկա էր բջջային հեռախոսաքարտ <<Վիվասել>> ընկերության, 8937493309-092126717F գրառմամբ իր մարտկոցի հետ միասին:

Նյութերի նախապատրաստման ընթացքում Աշոտ Զոբանյանը բացատրություններ է տվել, որ իր մոտից անձնական խուզարկությամբ հայտնաբերվածը իրեն է տվել Դերենիկ Տոնոյանը:

Դերենիկ Տոնոյանը բացատրությամբ հայտնել է, որ իր և Աշոտ Չոբանյանի անձնական խուզարկությամբ հայտնաբերվածները բոլորը պատկանում են իրեն, որոնցից ներարկիչները ինքը գնել է Գյումրի քաղաքի «Սայաթ Նովա>> վլողոցի վրա գտնվող դեղատնից, 10 մլ տարողությամբ ներարկիչի մեջ առկա 4 մլ տարողությամբ դեղնակարմրավուն հեղուկ զանգվածը անձամբ է պատրաստել իր վագոն տնակում, իսկ մնացածը մոտ մեկ ամսից ավել առաջ Լուսաղբյուր գյուղում գտնվող իրենց տանը իրեն է տվել իր եղբայրը Վահրամ Գուրգենի Տոնոյանը՝ ՌԴ գնալուց երեք օր առաջ, ով դրանք բերել է Ռուսաստանի Դաշնությունից:

Փորձագետի թիվ հմ 19-1514/1 եզրակացության համաձայն փորձաքննության ներկայացված

-փաթեթ 1-ի մեջ գտնվող, թափանցիկ, պոլիմերային թաղանթի մեջ փաթեթավորված, մուգ շագանակագույն, ափիոնին բնորոշ տեսքով և հոտով, 1.864 գրամ հաստատուն չոր քաշով զանգվածն իրենից ներկայացնում է ափիոն տեսակի թմրամիջոց, որն իր բաղադրության մեջ պարունակում է ափիոնային շարքի, մասնավորապես մորֆին, կոդեին, թեբաին տեսակների թմրակտիվ բաղադրատարեր,

-փաթեթ 2-ի մեջ գտնվող, կապտավուն և սպիտակավուն երանգների, պոլիմերային թաղանթի մեջ լցված, հետազոտության պահին 0.607 գրամ մաքուր քաշով, դարչնագույն երանգի բեկորների և փոշենման զանգվածի խառնուրդի /օբյեկտ 2/ բաղադրության մեջ հայտնաբերվել է հերոին տեսակի թմրամիջոց,

փաթեթ 3-ի մեջ գտնվող, թափանցիկ, պոլիմերային թաղանթի մեջ փաթեթավորված, բամբակե խծուծի մեջ ներծծված մուգ շագանակագույն երանգի հեղուկի և խծուծի վրա առկա մուգ շագանակագույն երանգի մնացորդների /օբյեկտ 3/ բաղադրության մեջ պարունակվում է 1.126 գրամ հաստատուն չոր քաշով ացետիտացված ափիոն տեսակի թմրամիջոց, որի բաղադրության մեջ պարունակվում են ափիոնային շարքի, մասնավորապես մորֆին և կոդեին տեսակների թմրակտիվ բաղադրատարրեր, ինչպես նաև մոնոացետիլմորֆին, դիացետիլմորֆին, ացետիլկոդեին տեսակների թմրակտիվ բաղադրատարրեր,

փաթեթ 4-ի մեջ գտնվող, թափանցիկ, պոլիմերային թաղանթի մեջ փաթեթավորված, բամբակե խծուծի վրա առկա մուգ շագանակագույն երանգի մնացորդների բաղադրության մեջ պարունակվում է 0.087 գրամ հաստատուն չոր քաշով ացետիլացված ափիոն տեսակի թմրամիջոց, որի բաղադրության մեջ պարունակվում են ափիոնային շարքի, մասնավորապես մորֆին և կոդեին տեսակների թմրակտիվ բաղադրատարրեր, ինչպես նաև մոնոացետիլմորֆին, դիացետիլմորֆին, ացետիլկոդեին տեսակների թմրակտիվ բաղադրատարրեր:

Օբյեկտ 3-ում և օբյեկտ 4-ում ացետիլացված ափիոն տեսակի թմրամիջոցի ընդհանուր քանակությունը կազմում է 1.213 գրամ:

Դեպքի առթիվ 2019 թվականի հուլիսի 29-ին ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Աշոցքի բաժնում հարուցվել է թիվ 34151319 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով, 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով և ըստ ենթակայության ուղարկվել Շիրակի մարզային քննչական վարչություն:

2019 թվականի սեպտեմբերի 2-ին որոշում է կայացվել Դերենիկ Տոնոյանին ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղադրյալ ներգրավելու մասին:

Քրեական գործի նախաքննության ընթացքում պարզվել է, որ Դերենիկ Տոնոյանը Լոռու մարզի հոգենյարդաբանական դիսպանսերում հաշվառված է <<Հոգական և վարքային խանգարումներ ալկոհոլի գործածման հետևանքով, կախվածության համախտանիշ>> ախտորոշմամբ:

Նկատի ունենալով, որ Դերենիկ Գուրգենի Տոնոյանի հոգեկան լիարժեքությունը, մեղսունակությունը և գործի համար նշանակություն ունեցող այլ հարցեր պարզելու համար անհրաժեշտ են դատական հոգեբուժության բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-245 և 248-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ

1. 34151319 քրեական գործով նշանակել ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերի դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի փորձագետին:

2.Փորձագետին առաջադրել հետևյալ հարցերը.

ա/ մեղադրյալ՝ Դերենիկ Գուրգենի Տոնոյանը նախկինում և վերը նկարագրված հանրորեն վտանգավոր արարքներ կատարելու պահին հոգեկան հիվանդությամբ տառապե՞լ է, թե՞ ոչ, եթե այո, ապա ինչպիսի՞ հիվանդությամբ է տառապել և ե՞րբվանից,

բ/ եթե մեղադրյալ՝ Դերենիկ Գուրգենի Տոնոյանը տառապել է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ հիվանդությունը զրկե՞լ է արդյոք նրան իր գործողություններին հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից,

գ/ մեղադրյալ՝ Դերենիկ Գուրգենի Տոնոյանը ներկայումս տառապու՞մ է որևէ հոգեկան հիվանդությամբ, եթե այո, ապա ինչպիսի՞,

դ/ եթե մեղադրյալ՝ Դերենիկ Գուրգենի Տոնոյանը տառապում է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ հիվանդությունը զրկու՞մ է նրան ներկայումս իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից,

ե/ մեղադրյալ՝ Դերենիկ Գուրգենի Տոնոյանը մեղսունա՞կ է, սահմանափակ մեղսունակ, թե՞ անմեղսունակ,

զ/ մեղադրյա Դերենիկ Գուրգենի Տոնոյանը հարկադիր բուժման կարիք ունի՞, թե՞ ոչ, եթե այո, ապա ի՞նչ տիպի հոգեբուժական հիվանդանոցում և հակացուցված չէ՞ արդյոք բուժումը, ինչպես նաև հանրության համար վտանգ ներկայացնու՞մ է, թե՞ ոչ:

է/ Դերենիկ Գուրգենի Տոնոյանը իր ներկայիս հոգեկան վիճակով կարող է մասնակցել դատաքննչական գործողություններին, թե ոչ:

3. Փորձագետին տրամադրել Դերենիկ Գուրգենի Տոնոյանին և քրեական գործի նյութերը:

4. Հանձնարարել ՀՀ Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերի դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի նախագահին՝ պարզաբանել փորձագետներին, ում հանձնարարվելու է փորձաքննության կատարումը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված՝ փորձագետի իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

5. Եթե փորձաքննության ընթացքում առաջանան հարցեր, որոնք կարող են օգտակար լինել քննության համար և որոնց պատասխանները մտնում են փորձագետի իրավասության մեջ, խնդրվում է պատասխանել նաև այդ հարցերին:

Հատկապես կևոր գործերով քննիչ,
արդարադատության երրորդ դասի խորհրդական՝ **Է.Ս.Վարդապետյան**